

2015 ՎԵՐԱԿՈՒՄ ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՅԱՆ **24-ՈՒ**, ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՅԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԿ ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՅԱՆ, ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՅԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՅԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՅԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՅԱՆ **100-ՈՒ** ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՅԱՆ :

Մարդկանց հոսքը դեպի Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցի սկսվեց դեռևս վաղ առավոտյան՝ մասնակցելու եկեղեցում մատուցվող Հիշատակի Սուրբ պատարագին: Հայոց ցեղասպանության սրբադասված նահատակների հիշատակի Սուրբ պատարագին ներկա էին Վրաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Յուրի Վարդանյանը՝ տիկնոջ՝ Էլեոնորա Վարդանյանի հետ, Վրաստանում Ավետարանական-Լյութերանական եկեղեցու առաջնորդ Հանս-Իոիսիմ եպիսկոպոս Կիդերլենը, Վրաստանի Ավետարանական-Մկրտական եկեղեցու հոգևոր հայր Տեր Մալխազ եպիսկոպոս Գափրինդաշվիլին, մայրաքաղաքի հայ հասարակական գործիչներ, մտավորականներ, համայնքային կառույցների ղեկավարներ: Բազմություն, որ զբաղեցրել էր եկեղեցին և նրա մերձակա ողջ տարածքը:

Հավարտ Սուրբ պատարագի, պատարագիչ Տեր Նարեկ քահանա Ղուչյանը օրվա խորհրդի մասին քարոզի խոսքում հիշատակեց նախորդ օրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում սրբադասված մեկուկես միլիոն նահատակների հիշատակը, սրբեր, որ դարձան հայ ժողովրդի պահպանները երկնքում: Տեր հայրը շնորհակալություն հայտնեց քույր եկեղեցիներ՝ Հռոմեական-Կաթոլիկ, Ավետարանական-Լյութերանական և Ավետարանական-Մկրտական Սուրբ եկեղեցիներին, որոնք կիսելով հայոց վիշտը այս օրերին իրենց աղոթքով, զուժկան զանգերով և Հիշատակի պատարագին իրենց ներկայությամբ ոգեկոչեցին Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակը: Պատարագից հետո, ներկաները ծաղկեպսակ դրեցին ու ծաղիկներ խոնարհեցին եկեղեցու բակում կանգնեցված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի խաչքարին, հոգևոր դասը շարականներ երգեց, իսկ Տեր Մանուկ քահանա Զեյնայանը կատարեց Ցեղասպանության 100-ամյակին նվիրված «Հրաշակերտ բազմություն» շարականը: Այնուհետև ժողովուրդը բողոքի պաստառներով, Վրաստանի և Հայաստանի պետական դրոշներով շարժվեց դեպի Թբիլիսիում Թուրքիայի Հանրապետության դեսպանություն, որտեղ կազմակերպվեց բողոքի խաղաղ հանրահավաք: Բազմամարդ էր հանրահավաքը, որին մասնակցեցին Թբիլիսիի հայկական կազմակերպություններ, այլ համայնքների ներկայացուցիչներ, Վրաստանի հայաբնակ շրջաններից հատուկ ժամանած հայեր: Բողոքի ակցիային իրենց մասնակցությունն էին բերել վրաց քաղաքական գործիչներ, ովքեր դատապարտելով Հայոց ցեղասպանությունը, վրաց իշխանություններին կոչ արեցին ճանաչել և դատապարտել Հայոց ցեղասպանությունը նման ոճրագործությունները կանխելու նպատակով: Հանրահավաքին հնչեցին նաև բողոքի բանաստեղծություններ և հայրենասիրական երգեր:

Ապրիլի 24-ին Հիշատակի պատարագներ, բողոքի ակցիաներ և խաղաղ հանրահավաքներ տեղի ունեցան Վրաստանի բոլոր հայաբնակ քաղաքներում և գյուղերում: